

Հ. ԿԱՐԱՊԵՏ ՏԵՐ-ՍԱՀԱԿԵԱՆ

(1882 - 1915)

Կենսագրական գիծեր. - Բանաստեղծությունները. - Ուղղութիւնը
եւ մշակուած նիւքերը. - Քնարերգութիւնները - Քերթուածները -
Վիպերգութիւնները - Արտաւագդ Գ.ի երգերը. - Բանաստեղծը իր
մէջ. - Բանասէրը եւ գիտունը:

Ապրիլեան նահատակներու արիւնները
դաշտին վրայ՝ ծանօթ բանաստեղծներու
մէջ կար նաեւ ուրիշ մը, մոռցուած ազ-
գէն, բայց որ ճշմարիտ հոգեղբայրն էր
Վարուժանի, Սիւսանի թոյլ եւ Ռ. Սեւա-
կի: Ատիկա Հ. Կարապետ Տէր-Սահակեան
էր, Մխիթարեան մը՝ որ իր երեսունեւե-
րեք տարեկան հասակին զոհուեցաւ կրօն-
քի եւ հայրենիքի համար: Հայ մամուլը
չգրադեցաւ իրմով¹, ո՛չ ազգային յաջոր-
դող անմիջական ողբերգութիւններու առթիւ
եւ ոչ ալ յետոյ: Այսօր երբ ազգը կը տօնէ
յիսնամեակը ահաւոր Եղեռնին՝ հարկ է
որ այդ մեծ բանաստեղծին զէմքը ստա-
նայ արժանաւոր լուսաւոյսիկ իր բո-
լոր զեղեցկութեան ու արժէքին մէջ: Հ.
Կարապետ Տէր-Սահակեան բանաստեղծ
միէր ամէն բանէ առաջ, բանասէր մը մի-
անգամայն եւ պատրաստուած զրազէտ
մը, համալսարանական բարձրագոյն կըր-
թութիւն ստացած, եւ որ իր գործին ար-
շալուսային փայլերն հաղիւ տուած՝ դը-
նաց խառնուելու մարտիրոսներու հոյլին:

Մովսէս, բարի մշտնի, իր ճակատին քըր-
տինքով խնամեց իր զաւակները՝ որոնց
մէջ փոքրիկ Սեդրաքը՝ որ բացառիկ ուշի-
մութեամբ մը կը փայլէր: Դրաւ զայն
տեղւոյն Մխիթարեան դպրոցը, ուր քիչ
ատենուան մէջ՝ ան սորվեցաւ ինչ որ ի-
րեն կ'աւանդէին: Հ. Անանիա Գոնտաք-
ճեան, որ անոր ուսուցիչն էր, առաջար-
կեց հօրը զրկելու զայն Վենետիկ՝ Ս. Ղա-
զարի վանքը: 1893ին հայրը առնելով իր
զաւակը եւ անոր ընկերը Կիրակոս Անդրի-
կեանը՝ զնաց Պոլիս, ուսկից նաւով մը
Սեդրաքն ու Կիրակոսը (որ յետոյ կ'ըլլայ
նշանաւոր բանասէր Հ. Ներսէս Անդրի-
կեանը) ճամբայ կ'ելլեն եւ կը հասնին Վե-
նետիկ Սեպտեմբեր 1ին: Իր առաջին դաս-
տիարակները կ'ըլլան վանքի Նորնծայա-
րանին մէջ Հ. Մկրտիչ Եանուղեան (տե-
սուչ) եւ Հ. Եղուարդ Սիրունեան (փոխ-
տեսուչ): Փոքրիկ Սեդրաքը իր քաղցր
ձայնով եւ զաւառական բնիկ հայեցի ար-
տասանութեամբ, եւ համակրելի իր շը-

¹ «Մշակ» (1915ի թ. 211), «Հորիզոն» (1915, թ.
223) օրաթերթերը չփոթութիւն մը յարուցած են
նահատակ վարդապետին անունին շուրջ, փոխանակ
Հ. Կարապետ Տէր-Սահակեանի՝ Հ. Ներսէս Աղի-
նեան յիշատակած են: Նմանապէս ուրիշ թերթեր
իրարմէ առնելով: 1919ի «Յուշարձան Ապրիլ Տաս-
նըմէկի» համառօտ տեղեկութիւն մը կը հաղորդէ
իր մասին. թ. 706: Հոն ընդհանուր յօդուած մ'ալ
կայ «Մխիթարեան զոհեր» խորագրով, էջ 124-27,
գրուած Հ. Ա. Ղազիկեանէն:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ

Ան ծնած էր Մուշ 1882 Օգոստոս 25ին:
Մկրտութեան անունով կոչուած Սեդրաք:
Երեք տարեկանին կորսնցուցած էր իր
մայրը Սոփիա: Անդրանիկ քոյրն էր Եղի-
սարեթ, եւ եղբայրը՝ Սահակ, տարիքով
երեք մեծ եւ արհեստով դերձակ: Հայրը՝

Արեգակներու քայլերգը՝ խմբագրական մըն է ոտանաւոր գրուած, ամանորի առիթով. կան հոն տողեր, պատկերներ՝ շատ յաջող, բայց ամբողջութեան մէջ թոյլ ու անհրապոյր է որպէս բանաստեղծութիւն. նմանապէս Երգ սիրոյ եւ բերկրութեանը՝ նուիրուած Միւղաֆֆէր-էտտին պարսից արքային մահուան եւ թագաժառանգին դահաւալութեան: Աւելի բանաստեղծական երանդ ունի Արիաւիրքներուն քերթուածը՝ ուր ջիւն ու կորովը անպակաս են, բայց չափազանցուած են զազաւարները. այդ տողերը՝ եթէ զբաւոյրուած վայելչութեամբ եւ յապաւումով անպէտ մասերու՝ այլապէս արտայայտուած ըլլալին՝ գրուածքը պիտի դառնար անշուշտ քերթողական ստեղծագործութիւն մը: Այս շարքին մէջ ամէնէն նկատելին է Համիտին տապալումը՝ գրուած 1909, Ապրիլ 28ին, Զուլեյքերի Մոնթրէոյ քաղաքը, հազիւ առած լուրը կարծիք Սուլթանի անկումին: Ներշնչումը կ'առնէ Շիյեոնի դղեակէն (Մոնթրէոյ, Լեմանի ափին), որ կը յիշեցնէր իրեն Երլազը, ուր դարանած էր ոճրագործը եւ արիւններով կը սնանէր: Աշխոյժ ու տաք ոճով մը, պատմական խորքին վրայ հիւստեւած նկարագրականով եւ խորհրդածութեամբ՝ ամբողջութիւն մըն է այդ քերթուածը՝ վեց մասերէ բաղկացած (Ա. Վագրի հըրճուանք, Բ. Դէպի Երլազ, Գ. Պատերազմ, Դ. Ապտիւլ-Համիտ գերի, Ե. Ծեր ոճրագործին աքսորը, Զ. Շիյեոնի դղեակին): Ինչպէս Պայրըն «Շիյեոնի բանտարկեալ»ով անմահացուցած է Պոնտիփարի հնդամեայ տառապանքին պատիժը, Հ. Կ. Տէր-Սահակեան ամբողջ մարդկութեան եւ հայերու բողոքն ու վրէժը կ'երգէ դահլիճէ կեց Սուլթանի դէմ կատարուած շարժումին մէջ՝ նորահաս թուրք կառավարութեան կողմէ: Մեր բանաստեղծը, ըստ իր սովորութեան, ներշնչումի պահերն օդատարծելի գիտցող, այդ ընդարձակ քերթուածին մեծ մասն արդէն գրած է շոգեկառքի մէջ՝ հաւանաբար Մոնթրէոյէն դէպի Ֆրիպուրի ըրած ճամբորդութեան ընթացքին: Իր աշխուժութիւնը եւ դիւ-

րութիւնը գրելու՝ յաճախ ի վնաս դրական գեղեցկին, հոս ալ պատճառ եղած է քիչ մը արտայայտութեան անխնամութեան: Ուժեղ միտքեր, գունազեղ պատկերներ եւ ընդլայնումի մէջ մշակուած որոշ ծրարներ մը, եւ վառ երեւակայութիւնը բանաստեղծին առաւելութիւններն են այդ գործին. սակայն ձեւական խնամքի պակասէն տուժած է պարզութիւնը եւ արտայայտութեան յստակութիւնը: Անտարակոյս կայ հոն ներշնչում, թափ եւ աւելին, ստեղծում միջավայրի, տեղական դոյնի՝ որուն չէր անձանթ, հոգեբանական ապրում, տեսարան ու շարժում, որոնց եթէ արուեստի կատարելութիւնն ալ դար միանալու, կը դառնար զլուխ գործոց մը: Տպագրութիւնը կատարուած Պոնտիս, ունի վրիպումներ ու անճշտութիւններ, որոնց հետեւանքով հեղինակին միտքն ալ տեղ տեղ պայծառութիւն չի յայտնուիր: Եթէ իբրեւ մտածութիւն ու դադար, իբրեւ ճոխութիւն դոյնի ու պատկերի՝ համեմատութեան դեմք Վարուժանի «Զարդ»ին հետ՝ աւելի հզօր, լեցուն ու ծանր է Հ. Կ. Տէր-Սահակեանի քերթուածը, որ խորհիւ կու տայ, մինչ Վարուժանինը նկարագրականին մէջ միայն կարծես կայացած դիւրասահ տողերով ու հասարակաց տեղիք մտքերով կ'ընթանայ իր դիւրին ճամբան: Վարուժանը հոնորութեամբ կը լեցնէ պարապը, Հ. Կ. Տէր-Սահակեան զազաւարին յորդութեամբ, բայց մինչ առաջինը արուեստը ունի կատարեալ արտայայտութեան եւ հետեւաբար պարզութեան, երկրորդը՝ խտացումէ խտացում կ'երթայ եւ թանձր դոյներով կը լեցնէ պատասառը:

ՎԻՊԵՐԳՈՒԹԻԻՆՆԵՐԸ

Հ. Կ. Տէր-Սահակեան փորձած է վիպերգական սեռն ալ, եւ դուրսէ արեւմտահայ գրականութեան մէջ, յետ «Հրանդ Արուս»ի ու «Զարհ եւ Նարդիկ»ի, աշխարհաբար լեզուով գրուած Թովմաս Թերգեանէն, նորագոյն շրջաններուն ինքն է որ մեր բանաստեղծութեան մէջ մտցուցած է

վիպերգութիւնը: Արեւելահայ գրականութիւնը ունէր իր փորձերը, եւ ինչպէս յայտնի է, Յ. Թումանեանով եւ անոր դերոյցին յաջորդներով դարձաւ կատարելագործուած սեռ մը: Հ. Կ. Տէր-Սահակեան վիպումի ալ դիւրութիւն ունի, աշխոյժ ու ժողովրդական եղանակով, որոնք սակայն թեթեւ ու անզարդ՝ չունին հրապոյրը գեղեցկագիտական ստեղծագործութեան: Այսպէս իր Ակամայ ոմիրը՝ բիւզանդական կեանքէ առնուած, ուր Անդրանիկի եւ Վասիլի՝ երկու հարազատներու սիրոյ վրայ հիւստեւած է նիւթը, որ ճակատագրականորէն եղբրական մահով կը վերջանայ փոքրիկ եղբոր Վասիլի՝ իր անդրանիկ եղբոր ձեռքէն, վասն զի մինչ սա դարանած էր սպաննելու իր սուր՝ ահամայ ոճիրով մը կեանքէ կը սուր՝ ահամայ ոճիրով մը կեանքէ կը զրկէ իր պաշտելի եղբայրը: Փառքի պատգարակը կարճ վիպում մը՝ Մամուլն հայ դիւցազնի քաջութիւններուն պարսկական բանակին դէմ. նիւթը առնուած է Սեբէոս պատմադրէն: Փրիմիփոյի ախարեալը՝ իշխանաւորի մը կեանքէն, որ ցաւերու համակամ՝ լուռ դիչերուան եւ ծաղկազարդ բնութեան մէջ կը գտնէ իր փոփանքը:

ԱՐՏԱԽԱԶԳ Գ.Ի ԵՐԳԵՐԸ

Արտաւագ Գ.Ի երգերով Հ. Կ. Տէր-Սահակեանի բանաստեղծութիւնը նոր հունի մը մէջ կը մտնէ. թէեւ ոճը իր արտայայտութեամբ կը մնայ գրեթէ նոյն, բայց խորքը հեղինական հին քերթողութեան արուեստին մօտենալու ճիգեր կը թանկ, ինչպէս կը զգացուի կարգ մը երգայտէ, ինչպէս կը զգացուի կարգ մը երգերու մէջ: Առանձին չարք մը կը կազմեն այս տիտղոսը կրող բանաստեղծութիւնները, որոնք երեւցած են մասով «Բազմավէպ»ի մէջ 1913ին, մաս մը նոյն տարւոյն «Գեղարուեստ»ի թ. 5ին մէջ եւ հատուածներ մ'ալ «Նաւասարդ»ի մէջ 1914ին: Բանաստեղծը իր երեւակայութեամբ ուղած է վերաստեղծել Արտաւագ արքայորդի երգերը, այնպէս՝ ինչպէս կը կարծէ գրուած ըլլալ հեղինական կրթութեամբ դար-

գացած հայ թագաժառանգը: Պլուտարքոսի վկայութեան համաձայն ան արդարեւ արտադրած է երգեր եւ թատերական գործեր, որոնք հասած չեն մեզի: Հ. Կ. Տէր-Սահակեանի գրական կեղծիքը առեն մը զարմացուց գրական հրապարակը, բայց յետոյ յայտնուեցաւ թէ անոնք ծրանուղէն միայն իր մտքին: Ան կ'ենթադրէ թէ Արտաւագը Հելլենասէր երգած ըլլալ իր օրերուն պատմական դէպքերը, հանդէսները եւ բնութեան ներշնչումները: Տեղի կ'ունենայ հոս տեսակ մը անձնափոխութիւն, որով ան կը փոխադրուի այն միջավայրը՝ ուր Արտաւագը ապրած է եւ կ'ենթադրէ ինքզինքը այն մտայնութեան՝ որով խորհած ու զգացած ըլլալ կը կարծէ ան: Այն կտորները, որոնք մեզի ծանօթ են՝ ընդարձակ ծրագրին միայն մէկ փոքր մասը կը կազմեն եւ որոնք չունեցան ամբողջութիւնը՝ անոնց հեղինակը տարաժամօրէն կտրուած ըլլալով իր գրական կեանքէն: Շատ հաւանաբար, ինչպէս «Գեղարուեստ»ի եւ «Նաւասարդ»ի մէջ եւս լեցած նիւթի առումը եւ Եփրատ քերթուածները ցոյց կու տան՝ ան շարունակած ըլլալու է վեհափառ թողլէն վերջնալ՝ ծնունդ տալ իր յղացումներուն: 1914ին կէսէն մինչեւ 1915ի Յունիս ամիսը դուրսէ կարգ մը նոր էջեր նոյն ծրագրով արտադրուած ըլլան, որոնք սակայն իրեն հետ կորսուեցան տարաբախտօրէն:

Արտաւագ Գ. Երգերը, այնպէս ինչպէս հրատարակուած են, անջատ անջատ քերթուածներ են, առանց ներքին զազաւարութեան մղելու մը՝ մին միւսին հետ: Անոնք կը սկզբնաւորուին բնութեան երգով մը, որուն կը յաջորդեն զինուորական քաջագործութիւններու երգեր, սոսկական հանդէսներու նկարագրութիւններ, եւ կայսերական ընտանիքէն տիւր գլուխներ:

Ա. - Յալիտեմակամ Արարատը, առաջինը այդ շարքին՝ ողբերկալ երգն է հայրենի սրբազան լեռան, խորհրդանշել հայրենիքին: Հոս, ինչպէս միւս կտորներուն մէջ՝ երգերը կը բաղկանան երկու մասե-

րէ, արձակի բաժինէ մը եւ տաղաչափեալ բանաստեղծութենէ: Արձակով կու տայ նկարագրութիւնը շրջանակին կամ միջավայրին՝ որուն մէջ զետեղուած է զգացում մի բաժինը՝ հոգեկան ապրումը Արտաւազդին: Արձակի մասը կը ծառայէ ուրեմըն պատրաստելու բուն երգը, որ դուցէ հասկնալի պիտի չըլլար այսօր մեզի՝ եթէ տրուած չըլլային զանոնք կանխող այդ բացատրութիւնները: Յաւիտեանակա Արարատը կուռ, պատկերաւոր երգ մ'է ըզմայլանքի՝ լեռներու նախահօր, ալեւոր եւ անմահ հսկային, որ տեսած է դարեր եւ ազգեր եւ որ հայրենիքի միութեան եւ հաստատութեան ներշնչող Ոգին կը ներկայացնէ: Այդ կարճ երգին մէջ բանաստեղծը խտացուցած է պատմական ակնարկներ, բնութենական նկարագրութիւններ, յաւերժութեան զգացումին եւ խանդավառութեան ապրումներ: Լի, ատուք ու ներշնչուած:

Բ. - Հայկական փայլերգը՝ ողբերգութեան ծնունդ մը հայ բանակին, որ պատերազմի կ'երթայ պարսիկներուն դէմ: Հոս գեղեցիկ է, դրաշխուն շեշտով գրուած արձակի մասը, ողբերգ մը Մամիկոնեան պայազատին, քան բուն քայլերգը՝ որ սովորական միտքեր կը պարունակէ եւ ուժովն ալ ուռուցիկ ու արուեստական:

Գ. - Գիշերային նուագահանդէս մը Բզնունեաց լեակին վրայ: Կը կանխէ նրկարագրութիւնը նուագահանդէսի միջավայրին. արքունական իշխանազունները՝ Առեստ աւանը կը գտնուին զօսանքի համար: Նկարագրուած է մանրամասնօրէն գիշերային ձկնորսութեան տեսարանը, որ տեղի կ'ունենայ գեղեցիկ լճակի մը վրայ՝ շրջապատուած լեռներէ ու բլուրներէ: Բանաստեղծը ուղած է շեշտել տեղական գոյնը: Երգերը կանխող այդ արձակը ստուգիւ անհրաժեշտ է հասկնալու համար այլաբանական եւ իմաստասիրական բանաստեղծութիւնները՝ որ կը յաջորդեն: Երգերը կը դառնան կէտքի գեղեցիկութեան, վաղանցիկութեան, աշխարհի եւ իրերու յարաբերութիւն

անկախուն վիճակին շուրջ: Մարդկային կեանքին նուիրուած այս խորհրդածութիւնները բնական կու դան զուարճութեանց ու հաճոյքներու նկարագրութեան հակադրութիւնէն: Գլխաւոր նիւթը այս երգերուն, բանաստեղծէն տիտղոսուած է Մահկանացուն, որ ընդհանուր դադափարը կը կեդրոնացնէ համադրական իմաստով: Քնարերգական յուզականութեամբ եւ իմաստասիրական մտածումի խորութեամբ երգուած այդ կտորները, կա՛մ խմբերգներ են եւ կա՛մ մեներգներ՝ քնարի ու սրինգի, փողի եւ տաւիղի ընկերակցութեամբ, եւ կը կրեն հետեւեալ ենթախորհրդերը. 1) Միջոցին, 2) Ողջոյն ապագայ լուսնկայ գիշերներուն, 3) Մահկանացու եւ անմահ, 4) Էակներու խորհրդաւորութիւնը, 5) Էակներու անցեալը, 6) Մարդկային ամբոյսին, 7) Հրաժեշտ բոլոր արարչագործութեան, 8) Հայրենիքի ապագայ սերունդին: Այս ութ կըտորները, դադափարային նոյն հիման վերայ հոյակերտուած հելլենական գեղեցկութիւններ են արդարեւ, ուր բանաստեղծը մահուան ու կեանքի այլադան ձեւերը կ'երգէ, յանդելու համար նոյն կէտին, այսինքն բնութեան տարրերուն, մարդու եւ ուրիշ կենդանի էակներու մէջ ձեւափոխութեան մը կամ հոգեփոխութեան մը դադափարին, համաձայն Պիլթագորասի փիլիսոփայութեան: Այս ըմբռնումին վերայ կ'աւելնայ որպէս շրջանակի զարդ բնութեան պաշտամունքը, սէրը թախծոտ գիշերներու, կանանց մարդերու, պայծառազեղ լճակներու, որոնց թովչութենէն և անհուն քաղցրութենէն ալիքներ կը խուժեն իր մէջ: Գարնանային թարմութեամբ եւ լեռներու յաւիտեանական անշարժութեամբ լեցուած է աշքը քերթողին, սիրով է ամէն ինչի որ կայ բնութեան մէջ եւ մարդուն, մարդուն՝ որ պաշարուած է ստուերներէ եւ առօրյ կենսունակութիւններ ունեցող տարրերէ, կեանքէ ու մահէ: Ըստ բանաստեղծին «Տիեզերքն է Մահուան շքեղ արքունիք» մը, բայց նոյն տիեզերքն է միանգամայն վերածնեալ մը նոր ու տարրեր ձեւերու տակ:

Թերթիդ կապոյտի հողին կու տաս, մանուշակ. Այլ գոյնդ ու ձեւ՝ երկնքին տակ պիտի մնայ. Ամէն անձի մէջ կը տեսնեմ գոյգ էակ:

Մահկանացուն եւ Անմահ:

Անհատն է որ կ'անհետի, բայց տիպարը (սեռի կամ տեսակի իմաստով) կը մնայ, եւ աշխարհը, - նոր ծառ մը որ միշտ կը պահէ իր հին երեւոյթը, - նորոգուելով կը վերածաղկի նոր ձեւերու ներքեւ: - Այդ երգերը իրենց փիլիսոփայական ենթահողով, մերթ Պիլթագորասի հոգեփոխութեան դրութեամբ, մերթ Արիստոտելեան ձեւի եւ նախանիւթի մտքով, երբեմն լուսաւոր ու պայծառ՝ բանաստեղծական երանգով զուարթացած, երբեմն մութ ու առեղծուածային երեւոյթով ծանրացած ու լի չափազանցութիւններով գոյներու, կը կազմեն տեսակ մը ամբողջութիւն՝ որ բոլորովին նորութիւն կը բերեն մեր դրականութեան համար: Դիտումաւոր արուեստի մը գործ են այդ բոլորը, պարզապէս դրական կեղծիքը հիմնաւորելու համար: Բայց յաջող կեղծիք:

Թատերական գործ է յաջորդը:

Դ. - Թագի եւ դագաղի ժառանգը, արձակ գրուած բացի քանի մը ընդհատ ընդհատ յաջորդող երգերէ: Իսկական ողբերգութիւն մըն է, ուր միայն նիւթն է հիւնը, Մեծն Տիգրանի անձին ու արքունիքին պատմութենէն առնուած, բայց եղանակը արտայայտութեան այնքան վարպետօրէն ծպտուած է հելլենական ողբերգութեան մը պահանջեալ պայմաններու տակ: Թագի եւ դագաղի ժառանգն է Արտաւան արքայը յորդին, (զորն այս ահաւոր ողբերգութեան մէջ) ծնած Միհրդատի աղջիկ՝ Կըլէոպատրիայէն: Ողբերգութիւնը կը կանխէ Արտաւազդի նամակ մը (որպէս նախարան կամ մուտք, ինչպէս է սովորութիւնը դասական խաղերու), գրուած Արտաւանի քրոջ, տալու անոր խնդրանքին վրայ՝ մանրամասնութիւններ եղբորական մահուան: Ողբերգութեան թատերափայլին է Տիգրան, ուր Մեծն Տիգրան հասած է իր զօրքերով եւ ընկճած փիւնիկէն: Որսորդութեան մը պահուն Արիորարդան (դար-

ձեալ որդի Մեծն Տիգրանի՝ մար թագուհիէ մը ծնած), որ քէն ու թշնամութիւն ունէր Արտաւանի դէմ՝ անկէ խլելու համար թագաժառանգութեան իրաւունքը, կը կազմակերպէ դաւ մը հայ նախարարներու հետ, սպաննելու կայսրը որսորդութեան մը ատեն եւ բոլոր յանցանքը ձգելու յետոյ Արտաւանի վրայ: Ծրագրերը կը յաջողին: Արտաւան անմեղ էր, չէր մասնակցած անգամ որսորդութեան, որովհետեւ հօրը հրամանով նախապէս չլիքեալ արգելափակուած էր, որովհետեւ Տիգրան կայսրը կը կասկածէր իր որդւոյն վրայ որպէս գործիք Միհրդատէն կղէտպատրիային եկած առաջարկի մը՝ սպաննելու զինքը: Մեծն Տիգրան, Արիորարդանի կազմակերպած դաւաճուածութեամբ, նետահար եղած էր: Նախարարները թագաւոր կը հռչակեն Արտաւանը ազատելով զայն իր շղթաներէն: Անոր առաջին գործը կ'ըլլայ վրէժը լուծել Արիորարդանէն: Արտաւան սիրուած դէմք մըն էր, իմաստուն եւ մարդասէր քան հայրը: Մեծն Տիգրան սակայն վիրաւորուած էր, բայց ոչ մեռած, փոքրիկ Տիգրանիկը (վերջին զաւակը կայսեր եւ եղբայրը Արտաւանին) կը հսկէ հօրը մարմնոյն՝ որ հետզհետէ ուժքի կու գայ ու կը կանգնի: Իր դէմը տեսնելով Արտաւանը՝ արդէն արքայական թագով եւ ծիրանիով զարդարուած՝ կը հաստատուի իր այն համոզումին մէջ, թէ իսկապէս անոր դաւաճագործին մէջ, թէ իսկապէս անոր դաւաճանութեամբն է որ ինքը վիրաւորուած էր: Վրէժի խնդիր եւ անուղթ կայսրը սպաննել կու տայ Արտաւանը եւ անհաւատարիմ նախարարները: Արտաւան, գրուած այն դադաղին մէջ, զոր ինքը պատրաստել տուած էր հօրը համար, կը փոխադրուի պալատը արքունական թափօրով, եւ կ'ըլլայ այսպէս քազի եւ դագաղի ժառանգ մը նոյն ատեն: Արտաւանի դագաղին վրայ անձնասպան կ'ըլլայ նաեւ Ռէշտունի Բարդաիւրանի աղջիկը՝ որ պիտի պաշտուէր իշխանին հետ՝ հսկառակ Տիգրան Մեծի կամքին: Կայսրը թագաւոր կը պսակէ իր կրտսեր որդին Տիգրանիկը՝ ըսելով «Թա-

